


631) վերջնականապէս մաքրեց հռովմէական տէրութեան մնացորդները Պիրինէյեան թերակղզու վրայից: Սոյնպէս ստիպուած էին Հերակլի ժամանակ անդառնալի կորած համարել Դանուբի զիծը, որ Մաւրիկիոսի ժամանակ մեծ դժուարութեամբ պահպանել էին: Հեմուսի և Դանուբի միջի տարածութիւնը վաղուց արդէն ողողել էին սլաւոնական զաղթականները: Յետագայ ժամանակադրութիւնը պատմում է, թէ Սերբերը և Կրովասները Հերակլի ժամանակ արդէն բռնել էին իրենց պատմական բնակավայրերը, և նրանով են իրենց մըխիթարում, որ իբր թէ այդ ցեղերը բռնել էին այդ երկիրները կայսեր հաւանութեամբ՝ Աւարների դէմ՝ կռուելու: Իրապէս բոլորովին զրահակառակն է ուղիղ: Հռովմայեցիները դժուարութեամբ էին պաշտպանում Դաղմատիայի ծովային քաղաքները: Աւելի երկիրազալի էր վրասնը Ավարների կողմից: 623 թ. նոքա ներս խուժեցին մինչև մայրաքաղաքի մօտերը, և կառավարութիւնը կարողացաւ խաղաղութիւն գնել միայն չափից դուրս մեծ հարկի վճարումով: Միաժամանակ Սլաւները շարունակում էին աւելի մեծ թուով մըտնել եւրոպական նահանգները: Նոցա թեթեւ մտիցիները կողոպտելով 623-ին հասան մինչև Կրեաէ, Դեռ աւելի սարսափելի էր 626 թ. Յուլ. 29-ի յարձակումը: Ավարները և Սլաւները ծովի և ցամաքի կողմից ձնշում էին մայրաքաղաքը՝ մինչդեռ միաժամանակ Շահբարազը Պարսից զօրքով կանգնած էր ասիական ափի՝ Բաղկեղոնի մօտ: Բայց քաջամարտիկ բերդապահ զօրքը յետ մղեց բոլոր յարձակումները: Օգոստոսին Ավարները և Սլաւները ստիպուած էին յետ խաղալ:

Ուժերի այս վերջին զօրեց լարումից յետոյ, Ավարները այլ ևս տէրութեան համար վտանգ չէին ներկայացնում: Սլաւոնական ցեղերը յետագայ տասնամեակներում ևս շարունակում են իրենց զաղթական հոսանքը դէպի Հեմուս թերակղզին: որ սկսել էին Մաւրիկիոսի ժամանակ, նոքա խիտ խմբերով բնակութիւն են հաստատում Միւսիայում, Մակեդոնիայում, Հելլասում և Պելոպոնէսում: Ուրալ—Ալտայեան Բոլղարները, որ շատ շուտ են յիշուում Դանուբի ժողովուրդների մէջ, նշանա-

ւոր դեր էին խաղում արդէն, երբ առաջին անգամ հանգէս են զալիս: Հերակլը արեւելքի վիճակի մէջ կարգ հաստատելուց յետոյ՝ 635 թ. նոցա իշխան Կուվրազի հետ դաշն կապեց, որպէսզի նրան զինի Սլաւների և Ավարների դէմ: Կուվրազը բաւական չափով արգարացրեց իւր վրայ դրած յոյսերը, և շնորհակալ կայսրը նրան առաւ պատրիկիոս տիտղոսը: Այժմ Ավարները սահմանափակուած մնացին Պանոնիայի իրենց բնակավայրերում:

Մեծարույ վարդապետ:

(Կը շարունակուի)



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ և ԻՇՏԱՆՈՒԹԻՒՆ

Սի անգամ կարգինալ Բանինգը ասել է, «Սովաւներին կերակրելու պարտաւորութիւնը ծագում է ամենայն մարդու ապրելու բնական իրաւունքից»: Եւ տարակոյս չկայ, որ այդպիսի պարտականութիւն կայ հասարակութեան և քաղաքական իշխանութեան վերայ, որը միշտ բաւարար կերպով չի կատարուել: Մինչ ցայսօր տակաւին չի գտնուած մի այնպիսի տնօրինութիւն, որով հնար լինէր ապահովեցնել իւրաքանչիւր անհատի համար հանապազօրեայ հացը:

Եւս տեսակէտից անցեալ ժամանակների հանդամանքները կարծես թէ աւելի յաջողակ էին: Մեր յառաջագէմ քաղաքակրթութեան շնորհիւ է, որ այսօր մեծամեծ պալատների կշտին՝ սովից տանջուող մարդիկ տարեցտարի բազմանում են: Պատմութիւնից միայն երկու դէպք է յայտնի, ուր որ ինքը պետութիւնը հոգս է արել ժողովրդեան հացի կարօտը մեծ ծաւալով լցուցանելու համար: եղիպսոսում հաստատուած կար արքունական մեծ շտեմարան, որտեղից հաց էր մատակարարվում ամբողջ ժողովրդեան, Մատակարարը բարձ ու պատուով մի մեծ պաշտօնեայ էր (եւս բարկացաւ փարաւոն ի վերայ մատակարարին), բայց զերծ չէր նաև արևելեան պաշտօնէի ամէն վտանգներից (եւս զմատակարարն կախեաց զփայտէս), Հռովմում սնանկութեան հասած պետութիւնը երկրորդ դարու վերջը

կանգնեցրեց մեծամեծ փուռեր սրպէս զի իւրաքանչիւր civis romanus proletarius (հռոմէական բնիկ չքաւորը) օրական 4 դրուանքայ ձրի հաց ստանայ:

Միջին դարում եւրոպական տէրութեանց շատերի մէջ գտնուում ենք հասարակաց փուռեր, նախ զիւղերում, ապա քաղաքներում, որ կամ ինքը տէրութիւնն էր պահպանում, կամ արտօնութեամբ մի հացագործի էր յանձնում: Բայց աւելի սովորական էր հասարակութեան վերայ կարգած մի ոստիկանութիւն, որ խստիւ հսկում էր հացի գնի, կշռի և լաւութեան վերայ: Հացարարութեան գործում զանցառուները պատժվում էին զբամական ծանր տուգանքով: Թխած հացը զբաւելով խանութը փակելով, առուտուր անելու իրաւունքն ու ազատութիւնը կորցնելով, ձեռով և նոյն իսկ մահով: Այն ժամանակ հանաք բան չէին համարում «հացի վաշխառութիւնը»: Զոր օր. 18-դ դարում Գերմանիայում վատ կամ պակասակշիռ հաց ծախողի «զուլը լուանում էին» այսինքն ամբողջ մարմնով ջուրն էին բնկղմում: Այդ նպատակով մի դար առաջ Պրագայի կամրջին միշտ պատրաստի կան էր արած «զուլու լուալու քթոց», 13-դ դարում Անգլիայում խորքայ փոնչիներէց մէկին՝ կշռի չնչին պակասութեան պատճառով՝ Լոնդոնի փողոցներում քարչ տուեցին:

Այսպիսի հսկողութեան փոյթը այն աստիճան ժողովրդեան հոգու մէջ էր մտել, որ բնաւ կարիք չկար ի վերուստ կամ յարտաքուստ ճնշում գործելու: Քաղաքային խորհուրդը ոչինչ բանով այնպէս սիրելի չէր լինի ժողովրդեան աչքում, որքան խստիւ կատարել տալով սահմանած նիճը\*. Ոչ այսքան միայն, այլ քաղաքական վարչութեան պարտականութիւնն էր նաև ցորենի պաշար ունենալ, սովի դէմ պատրաստ լինելու համար: Այսպիսի հոգացողութիւններից էր մտել հէնց նիճ սահմանելու սովորութիւնը: Տակաւին 1362-ին Կարլոս IV կայսրը հրամայել է Բոհեմիայի քաղաքներում և վանքերում ցորենի ամբարներ պահպանել: Պատմում են թէ 1540 թ., երբ որ Կարլոս V-ը այցելեց 'իւրերեք քաղաքը՝ նա հաց ճաշակեց այն ցորենից, որ 118 տարուց աւելի պահուած էր եղել քաղաքի շտեմարաններում: Իսկ թէ շտեմարանների բարեկարգութեամբ որպիսի բարիքներ կարելի է գործել, այդ բանը Ֆրիդրիկոս մեծը 1771 թ. փառաւոր օրինակով հաստատեց: Մինչդեռ այդ ժամանակները Բոհեմիայում (մի չեֆֆէլ) հացի գինը 4 թալեր էր: Պրուսիայում նոյնը վաճառուել չէր կարող ընթացից աւելի գնով: Սովից ազատուելու համար Պրուսիա եկան՝ զբացի երկիրներից փախող 40,000 շինականներ: Ֆրիդրիկոսի շտեմարանները

\* Wequivalent taxe et tarif բառերը հասարակորէն քարցմանում են սակագին բառով, միևնույն առաջին համար ունիմ երկն բառ, իսկ երկրորդն է սակագին:

սկզբներում հաստատուել էին միայն զօրքի պիտոյից համար, Իսկ ապա հացի մատակարարութիւնը նա համարեց սերտրեան խեղացի վարչութեան գլխաւոր խնդիրներից մեկը:

Ամէն քաղաքներում և նոյն իսկ զիւղերում այնուհետև ևս շարունակում էին հացի նիճ սահմանել, որ և յատնում էին հացագործների վերայ խստիւ հսկող գործակալներին: ՆՏի բարձրութիւնը համեմատ պիտի լինէր արմախքների գնին: Առաւօտեան ժամի 6-ին օստիկանութիւնը զբաղուած էր թխած հացի կշիռը ստուգելով: Ար հացը որ սահմանածից պակաս կշռէր՝ ձրի բաշխում էր ժողովրդեան, Վիեննայում դեռ անցաւ դարում հացագործութիւնը կաշկանդուած էր խիստ կարգադրութիւններով: Այլիւր պիտի վաճառուէր վարչութեան նշանակած գնով, իսկ հացագործը խմոր պիտի շինէր և հաց թխէր սահմանած չափ ու կշռով: Հացագործները պարտաւոր էին միշտ պատրաստ հաց ունենալ ժողովրդեան պէտքերի համեմատ: Եթէ հացը լաւ չլինէր, հացագործներն ոճրագործների և լիտի կանանց հաւասար խայտառակ պատիժներ կրելով էին տուժում:

Սակայն հէնց որ քաղաքները դադարեցան արհեստների տիրական կայան լինելուց և համագումարուած արհեստները ջոկուեցան ու ցրուեցան երկրի զանազան վայրերում, քաղաքների ազդեցութիւնը նուազեց երկրի հեռաւոր անտեսութեան վերայ, որով սկսեցին անյայտանալ նաև կենսական պիտոյքների առուտուրի վերայ հսկելու փորձերը: Պրուսիայից ի հարկէ անհատների շահասիրութեամբ տապալուեցաւ հին դրութիւնը: Միջին դարու վերջերում այնպիսի գորութեամբ և ծայրայեղութեամբ անձնապաշտութեան ոգի տիրեց ամենուրեք, ինչպէս երբէք չէր պատահել, որ և վերանսութեան անհատական ոգի անունով՝ գրեթէ որպէս նոր տնտեսական ուժի յայտնութիւն պիտի ճանաչուի: Մինչև այս ժամանակները հացագործութիւնը՝ ապրուստ մատակարարող արհեստների պէս՝ նկատվում էր իրր սուրբ պաշտօն և հասարակաց շահերին նուիրուած պիտի լինէր: Բայց այդպիսի քրիստոնէական հայեացքը այժմ յօգս ցնդուեցաւ, որովհետև տնտեսական ազատութիւնը քարոզուեցաւ որպէս միակ երջանկացնող վարդապետութիւն, որ օրինադրութեան և վարչական ուղղութեան մէջ ևս յաղթանակ ստացաւ:

Այսպէս ուրեմն հաց մատակարարելու ազգային հոգը առհասարակ բարձի թողի արուեցաւ, և մատակարարութիւնը այնուհետև բացառապէս մասնաւոր նախաձեռնութեան և անհատական ձեռնարկութեան կամ քանտեսական գորութեանց արձակ համարձակ գործողութեան» բաժին համարուեցաւ: մանաւանդ որ հաղորդակցութեան դիւրութիւններով ապահոված էին համարում, թէ ամենայն ժամա-

նակ, աշխարհի ամենայն ծայրերից, հնարաւոր կը լինի շուկաներին ցորեն հասուցանել:

Ախուեցան հացի պաշխառութիւնն, ու բազմարուեստ անագորոյն կեղեքումը, և այս բաներից ծագող սարսափելի վնասները, նոր ժամանակներում այս շարութիւններն՝ բայց առաւելագոյն միմիայն հաց պատրաստելու նենգութիւններն աշխատեցին կարճել մի քանի՝ այն ևս շատ անգամ անզոր, օրէնքներով: Պետութիւնները հաղիւ հնար գտան միայն ամենաեական և չափաւոր օրէնքներ սահմանել, որոնք թէպէտ թղթի վերայ գրուել են, բայց հացագործների շարունակ ճարպիկ զանցառութիւններով գրեթէ չկատարուելու են դատապարտուել:

Անգլիայի Bakehouse Regulation acts (1863) հրովարտակները արգելում են 14 տարեկանից պակաս անձերին՝ փոան մէջ աշխատել երեկոյան ժամի 9-ից մինչև առաւտեան ժամի 5-ը, և Նոնդոնի համար 1891-ին մասնաւոր կարգադրութիւններ հրատարակուեցան: Փոան պատերը պէտք է 6 ամիսը մի անգամ գաճով սուաղուին կամ երկքտակ ձիթաներիով ծածկուին, ապա 6 ամիսը մի անգամ ասք սպոնջրով լուացուին: Փուսը ջուկ բաժանուած սենեակներ պիտի ունենայ՝ յատկապէս միայն ննջելու համար: Տեսուչներն ու քննիչներն ապացուցին, որ այս կարգադրութիւնները գրեթէ անկատար են մնում: 1895-ին պարլամենտը վճարական քայլ արեց, Փուսը հաւասարեցրեց գործարաններին և պահանջեց, որ իւրաքանչիւր բանուորի համար առանուաղն 250 խորանարդ ոտնաչափ օդ ունենայ, իսկ արուեստական լուսաւորութեան դէպքերում՝ նաև 400 խորանարդ ոտնաչափ: Անգլիայում համոզուել են, թէ ժողովրդական համար անտարբեր հանգամանք չի կարող լինել, թէ արդեօք հանապազօրեայ հացը որ տեղ և ինչպէս և ում ձեռքով է պատրաստուում, որովհետև պարլամենտի սոսկալի յայանագործութիւնները ամէնքի զդուանքն են շարժել:

Ինքնամիայնի առողջապահական կանոնները առաւելագոյն վերարերում էին ցորենի խորգախելուն: Իսկ մի ուրիշ կարգադրութիւնն այն էր, որ ստիկանութեան կնքով գների ծանուցագիր պիտի կախ տրուի հրապարակի մէջ, տեղ տեղ և այն, թէ հացի մէջ ջրի պարունակութիւնը որքան պիտի լինի: Միայն 1896-ին սահմանուեցաւ աշխատութեան և հանգրտանան ժամերի, աշկերտների պարտաւորութեան և այլ բաների կանոնաւորութիւնը: Բայց հացագործներն հիմա արդէն սկսում են տրտնջալ, բողոքներ են յայտնում և մէկ մէկու յետևից խնդրագրեր են առարում:

Աւստրիայում զօրութիւն ունի 1895 թ. հրամանը—թղթի վերայ թէ արդելած է ցածր, խոնաւ և վատ օդափոխութիւն ունեցող խանութներում հաց վաճառել, և թէ հացը պէտք է լաւ

թխած լինի և վնասակար բաղադրութիւններ չունենայ: Ման և ուրիշ առողջապահական կարգադրութիւններ, օրական առ առաւել 11 ժամ աշխատութիւն, կիրակնօրեայ հանգիստ, աշկերտների գիշերուայ աշխատութիւնից ազատութիւն և այլն: Սակայն տեսուչների ոյժը ամենևին չի հասնում, որքան որ նրա այս բոլորի վերայ ճշտու հսկին, ուստի և անզուար գանգատուում են հացագործութեան առողջապահական վիճակի և շարունակ զանցառութիւնների մասին:

Եթէ առաջ բերենք Ֆրանսիայի, Զուիցերիայի, Լուսեմբուրգի, Եսեկիայի, Ֆինլանդիայի, Ետրիգիայի, և նոյն իսկ Աւստրիայի մասին տեղեկութիւնները, անոնք շատ չեն զանազանուի արդէն յիշատակած տեղեկութիւններից: Ամէն տեղ նոյն միակերպութիւնն է տիրում, ոչ մի տեղ չի նշմարվում հացի մատակարարութեան լայն հայեցողութիւն, թէ հասարակութեան ամբողջութիւնը սեպուհ պարտականութիւններ ունի այլ ամէնի մէջ նեղ և անզոր պաշտօնական հայեացք է երևում, որով թէպէտ բանուորները պաշտպանվում են, բայց իրապէս հաց սպառողները դարձեալ չեն պաշտպանուած: Եղած կարգադրութիւններն էլ մեծ մասով անկատար են մնում:

Սակայն դառնութեան բաժակը լցուել է, արդէն ինչ որ մի նոր բան է խմորվում: Ժողովուրդ կերակրելու խնդիրը, լաւ և էժան հացի հոգսը՝ այնքան նշանաւոր հանգամանք է և իւրաքանչիւր մարդու տնտեսական կենաց մէջ այնքան խորն է մտուած, որ անյսելի չի կարող մնալ: Հետզհետ յայտնի և հասկանալի է դառնում, թէ հացագործութեան այսօրուայ մանրարհեստ աշխատութիւնը որքան անխորհուրդ է, և թէ լաւ կազմակերպած համայնույն արդիւնագործութիւնը որքան էժան հաց կարող էր արտադրել: Այսպիսի փորձեր տեղութիւնները տակաւին չեն արել, բացարձակապէս իրանց վերարերելի խնդիր չհամարելով, իսկ մասնաւոր ընկերութիւնների շահագործութիւնը արդէն սկսել է տեղ տեղ հացի զործարաններ հաստատել: Հարկաւ անոնք առաւելագոյն մեքենաներով են բանում, ալիւր և ցորեն մեծ քանակով են գնում և մտաւուտ ժամանակներում հացի մենափաճառներ պիտի դառնան, որովհետև մի կարճ մրցութիւնից յետոյ՝ պիտի խնդրեն փոքր հացագործների գոյութիւնը: Շահագործութիւնը շահասիրութեան ընկեր է, այն ժամանակ վայ պիտի գայ երկրագործի և հաց սպառողի զլխին:

Բայց մի ուրիշ բան էլ է խմորվում: Արդէն շատ տեղերում հացագործների միաբանութիւններ են կազմուել, մեծ մասով սպառողների ընկերութեանց լծակցութեամբ, ոմանց արդիւնքը շատ փառաւոր է, եթէ չհաշուենք միւսների վարչութեան անհաւատարմութիւնն ու անզամոց խարերայութիւնը:

Արիշ տեղերում երկրագործները ձգտում են արմրտիքների առուտուրը շողկապել ջրաղացների և հացագործութեան հետ, այս բանի շատ յաջող օրինակներ կան: Ապա յիշատակենք և մի քանի ևսաստիպ փոռեր, ուր կամ իրաքանչիւր տուն իւր հացն է թխում իւր հաշուով, կամ հաց է պատրաստում նաև ընդհանուրի հաշուով՝ միմիայն տեղական բնակիչների համար: Այս դեպքում ամբողջ գիւղը մի հացագործութեան ընկերութիւն է դառնում, որ շատ անգամ մի և նոյն ժամանակ կազմում է նաև ալիւր աղալու ընկերութիւն:

Հացի խնդիրը հանրագում և քաղաքակրթական ոգով լուծող այսպիսի փորձերից՝ տարբեր է կապալատուութեան կարգադրութիւնը, այն՝ ինչ որ իտալական հնչմամբ կոչւում է ապպայսո կամ ապպայսասօրե: որով մեկը կապալով պարտաւորում է գիւղացիների հացը հողալ, Ասոր հետեանքն այն է լինում, որ էժանագին հացը թանկ է վաճառւում, ուրեմն օրինակելի բան չի կարող համարուիլ: Մանաւանդ որ այս սովորութիւնը կեանքի մէջ մտել է ոչ թէ հացի մատկարարութիւնը հանրախնամ գործ գործնելու ձգտումից, այլ աւելի գիւղի եկամուտը աճեցնելու խորհրդով, ևլ չենք ասում, թէ ապպայսոյի իրաւունքը արգելք է դնում հացագործական ընկերութիւնների ազատ կազմութեան: Ապպալատն օգտաւէտ է միայն մի դեպքում, եթէ գիւղի բոլոր սպառողները իրանց շահը ձանձախում բարեխիղճ կերպով ընտրեն տանուտէրներին և վարչական միւս անդամներին, այն ժամանակ և՛ լաւ հաց կունենան, և՛ գիւղի եկամուտը շատ կը լինի, այնպէս որ այնուհետև հնարաւոր կը դառնայ շինականների վճարած հարկը թեթեւացնել:

Առաջ յիշատակեցինք, թէ հացի խնդիրը լուծելու համար հատ հատ փորձեր են եղել փոքր քաղաքի և մասնաւոր միաբանութիւններ կազմելով անոնք ամենուրեք և շարունակ արգելեաւոր չեն կարող լինել, թէպէտև ժամանակ առ ժամանակ յաջողութիւններ են ունեցել, Հացի խնդիրը հիմնապէս և վսիսձանապէս կը լուծուի—միմիայն ընդհանրութեան մետքով և ընդհանրութեան համար գործելով:

Այս տեսակէտից «Revue d'Economie politique» (13-դ տարի) մի հետաքրքրական փորձ է հաղորդում: Փարիզի 1889 թ. քաղաքային խորհուրդը սկզբունքով ընդունեց համայնական հացագործութեան ձեռնարկել, և սկսեց միջոցների մասին հողալ, Հասկանալի է, թէ այս վճիռը ինչ իրարանցում պատճառեց անտեսագէտների բանակում, Ազատամիտ մամուլը ամենայն եռանդով բողոքեց այդ բանի դէմ, Անդդմամբսները առաւելապէս այն էին պընդում, թէ միթէ նոր կանոնադրութիւնը կը վըստահանայ դիպել հացագործների աղատութեան, որոնց թիւը Փարիզում 1800 է, ևւ իրօք, հէնց այդ է ազատ մրցութեան սկզբունքի անէճքն ու

պատահար: Փարիզի 1800 հացագործների և 2000 մագործների գոյութիւնը՝ դուր աշխատութեան և գրամագլխի սոսկալի շնայութիւն է, ուր որ նոցա տասերորդ մասը կարող էր բաւարար կերպով լցուցանել հարկաւոր պիտոյքները:—Եւ վճիռը անկատար մնաց, որովհետև նորընտիր խորհուրդը մերժեց այն:

Բայց համայնական հացագործութեան փորձը ոչ յեղափոխիչ է և ոչ անլուր մի բան: Այդպիսի փորձի խոհականութեան լաւագոյն ապացոյցը այն հանգամանքն է, որ արդէն բաւական յաջողութեամբ գործ է դրուել, Սպանիայում և Պորտուգալիայում համայնական հացագործութիւնը հաստատ հիմք է դրել, Պամպելունա քաղաքում կայ շատ զեղչեցիկ կազմակերպուած համայնական հացագործութիւն, «ayuntamiento»-ի (քաղաքարաշխութեան) հաշուով հիմնած, նոյնպիսի փորձ Մարիզի մէջ ապարդիւն անցաւ այն անձանց նախաձեռնութեան և արնուութեան պահասութեան պատճառով, որոնց յանձնուել էր գործի ղեկավարութիւնը: 1876-ից սկսած Ախարոնում կան պատուական կերպով գործող 12 համայնական մագործութիւններ, ուր և վստահութեամբ փորձում են այդ կարգի հացագործութիւններ ևս հաստատել, Պորտուգալիայում դրսից ցորեն կտրելի է ներմուծել միայն այն դեպքում, եթէ երկրի բերքը թանկանայ:—Ահա ուրեմն նորագոյն ժամանակի ոգով իրականացած մի անժխտելի օրինակ, որով ապահովեցրած է երկրին հաց մատակարարելու գործը, այն ևս ըստ հնարաւորութեան տեղական բերքերով:

Սոքա են մեր գլխաւոր տեղեկութիւնները, թէ հաց պատրաստելու և մատակարարելու վերայ քաղաքական իշխանութիւնը ինչ ազդեցութիւն է ունեցել անցեալում և ներկայում:

Բայց ի հարկէ նոյն խորհրդով այլ առաջարկութիւններ ևս եղել են, թէպէտև բուն գործը լիովին չի համապատասխանել բարի մտադրութեան: Զոր օր, 1894-ին Սօրէ պատգամաւորը ֆրանսիական տէրութեան խորհուրդ է տուել կարգել օտարամուտ ցորենի մեծամաճառութիւն, Կերմանիայում կոմս Պանիցը առաջարկել է պետական միջամտութեամբ արմիր մատակարարել ժողովրդեան, 1886-ին Զուիցերիայում Կերլախը պահանջում էր, որ տէրութիւնը տեղական երկրագործներից հունձը գնէ, տակառակչին 40 ֆրանկ աւելի վճարով, քան իրանց ծախք է նստում, Բայց եթէ իրագործուին այս բոլոր առաջարկութիւնները, որ հացի խնդիրը լոկ միակողմանի կերպով են շոշափում, թէպէտ և երկրագործի եկամուտը կը շատացնեն, ցորենի գինը բարձրացնելով, բայց հացն էլ կը թանկացնեն, ուրեմն հացի խնդրի ամբողջութիւնը չեն լուծում, այլ ի մասնաւորի ծառայում են հողատիրութեան, ընկերվարութեան, կուսակցական քաղաքական նպատակներին:

Նոյն կարգում պէտք է դասենք նաև այն նը-  
շանաւոր շարժումը, որ նորերս Փրանսիայում և  
Իտալիայում սկսուել է և որ պետութիւնից մի կողմի  
ատակարարութիւն է պահանջում: Կլոպիս Հիւզ  
պատգամաւորը 1895-ին Փրանսիական խորհրդարա-  
նի առաջ դրեց հետևեալ օրէնքի նախագաղափարը.

1. յօդ. Համայնական վարչութիւններին իշ-  
խանութիւն է տրվում ձրի հացի մատակարարու-  
թիւնը կազմակերպել որպէս հրապարակական սե-  
պուհ պաշտօն:

2. յօդ. Համայնական Քանձարներ ծածկում  
է այն հացի ծախքը, որ սպառողին տալու է ձրի  
խկ հացագործները պատրաստելու են ազատ մրը-  
ցակցութեան ճանապարհով:

3. յօդ. Հացագործների դուրս տուած հացի  
ընկալադրերը միաժամանակ ստուգվում են գնած  
ալիւրը վաւերացնող թղթերով:

4. յօդ. Պուրս թողած հացի քանակութիւնը  
նշանակվում է կրկնակի նախ՝ մերիայից (չահա-  
պութիւնից) տրուած անուանական կամ ընտանե-  
կան գրքուկի մէջ: ուր որ հացագործը նշանակում է  
հաց տալու օրը իւր ստորագրութեամբ, և երկ-  
րորդ՝ յատուկ տոմարի մէջ, որ նա ստուգութեան  
համար ամենայն ժամանակ պարտաւոր է ըստ պա-  
հանջման ներկայացնել քաղաքօրէններին:

5. յօդ. Հացի արտադրութեան ծախքը, որ  
համայնական հաշուեկշռի մէջ ուրիշ բոլոր ծախ-  
քերի պէս յատուկ յօդուածով է կարգվում, ինք-  
նին պահանջում է հարկերի յաւելուածոյ նոր դուռ  
բանայ, և այդ նոր հարկը պէտք է հայթայթուի  
սովորական ճանապարհով:

Այդ առաջարկութեան սկզբունքն այս է. իւ-  
րաքանչիւր մարդ, ինչպէս որ օգի և ջրի իրաւունք  
ունի, այնպէս էլ պէտք է ունենայ մի կտոր հացի  
իրաւունք, որ կարողանայ իւր քաղցը յագեցնել:  
Թող միւս բաները իւրաքանչիւր անհատի վաստա-  
կից կախում ունենան, բայց հաց պէտք է նա ստա-  
նայ յամենայն գէղս: հացի իրաւունքը բնածին է,  
դա մարդկային բնական իրաւունքներից մէկն է:  
Պետութիւնը պէտք է լինի հաց մատակարարող,  
Բոլոր հարկ վճարողները պէտք է միասին կրեն  
ծախքը. հասարակաց հացը անխտիր բոլորի բաժին  
է—թէ հարստի և թէ աղքատի. ոչ ոք կարօտ  
չպէտք է լինի մուրացածոյ հացի հետամուտ լինե-  
լու: Ծախքը բարձրում է հաւաքած հարկերից,  
որովք եկամտի և կալքի համեմատութեամբ աժուած  
և նուազում են, և ուրեմն ժողովրդեան սխիշքոր  
գասի վերայ չեն ծանրանում, այնպէս որ իսկապէս  
առնելով ունեորը շքաւորի հացի փոխարէնն է  
վճարում:

Օրագիրը այս ձևով գուրս եկաւ Փրանսիա-  
յից, Իտալիան, ուր որ աղքատութեան ճիւղը  
սարսափելի ձևերով է յայտնվում, շատ յուզուե-

ցաւ այդ օրինակից և իւր թերթերում թերև դէմ  
խօսողների բանակուիւ բաց արաւ: Ամենից աւելի  
եռանդով և յաջողութեամբ ծրագրի գրուատող  
հանգիսացաւ Փրանչեսկօ Սանտօնէ: Թիթէ պէտք է  
աւելացնել, թէ բանուոր դասը բնաւ ցնծալու  
պատճառ չունէր այդ ծրագրից—գարմանալի է  
թուում այս խօսքը, այնպէս չէ: Բայց թէ հացը  
ձրի մատակարարուի, այն ևս ոչ թէ որպէս ոգոր-  
մութիւն, այլ օրինասահման պատշաճա որութեամբ,  
այն ժամանակ ինչ չափով որ բանուորի ծախքը  
թեթեւանայ (հացի ծախքից ազատուելով), այն չա-  
փով կը պահպան նորա աշխատանաց վարձը: Մարդ  
պէտք է այսօրուայ մրցութեան պայքարի մասին  
գաղափար ունենայ, որ ինզրի վերի երեսից չխա-  
բուի և հաւանական հետևանքները ճշդիւ գուշակէ:  
Քանի որ այդպէս պայքարելու գրութիւնը թագաւո-  
րում է, վարձարութեան երկաթէ անողոր օրէնքը  
միշտ կցորդ կը լինի. փոյթ չէ, եթէ ոմանք ցնո-  
րում և հաւատում են, իբր թէ այդ աղէտը ընկեր-  
վարական-ոսմկապետական ծրագրի մէջ արդէն ան-  
դարձ ջնջուած է:

Պէտք է խոստովանել, որ ձրի հացի գաղա-  
փարը նմանապէս միակողմանի է և արդարութեան  
ու բարքի նկատմամբ անընդունելի: Թեպէտ հասա-  
րակութիւնը պարտաւոր է քաղցածին կերակրել,  
բայց այս այնպէս չպէտք է հասկանալ, իբր թէ  
ոմանք իրաւունք ունին առօք փառօք միւսների հա-  
շուով կերակրուելու և կշտանալու, այլ այնպէս  
թէ հասարակութիւնը պարտաւոր է տնօրինել, որ  
իւրաքանչիւր մարդ յարմարութիւն և հնարաւորու-  
թիւն ունենայ իւր աղար աշխատութեան իւր անձի  
և իւր ընտանիքի համար՝ ապահովապէս և բաւա-  
բար հաց վաստակել:

Սակայն թող անիրագործելի լինի թող նպա-  
տակից վրիպած լինի և սկզբունքով խախուտ հիմք  
ունենայ, բոյց և այնպէս ձրի հացի գաղափարը,  
մանաւանդ Կլոպիս Հիւզի օրինագիծը, որով Փրան-  
սիական խորհրդարանը մօտերումս պիտի սրաղուի,  
մեծ կարևորութիւն ունի, իբրև ժամանակի ոգու  
խոշոր նշան: Ասան զի այդպիսի գաղափարների և  
առաջարկութիւնների զլխաւոր հանգամանքը այն  
չէ, թէ արդօք գործադրելի է կամ թէ գործա-  
դրելի չէ. այս բանը խնդրի երկրորդական և եր-  
րորդական կէտն է: Եթէ այսպիսի մահու և կենաց  
խնդրի առաջարկութիւնները չափենք անմիջական  
իրագործութեան չափով, այդ նշանակում է մանրա-  
վաճառի հաշիւներով խորհել: Թող սլացած նետը  
նպատակի կէտից վրիպած լինի, փոյթ չէ: Ընդհա-  
կառակ, այն ժամանակ մարդկային բաղմութիւն-  
ների սիրան ու միտքը ելքի ակնկալութիւններով  
կը յուզուի և կը գրաւուի: Կականը և կարևորը  
այն է, որ այդպիսի առաջարկութիւնների մէջ ցոլանայ  
նախ և առաջ ուղիղ սկզբունքը, սուրբ սկզբունքը:

Իսկ մեկը գիտենք, որ ամենայն կողմերից, և միշտ աւելի և աւելի բարձրագոյակի, յուզվում է հետեւեալ հիմնական խնդիրը, որի ծոցից որ ծագում է նոյն իսկ ձրի հացի գաղափարը. «ի՞նչ անենք, որ արիւնքրափնքով աշխատող ժողովրդեանը մատակարարենք առողջ, ապահով, հանապազօրեայ, բաւականաչափ, անվաշխառելի հաց»: Այս խնդիրը չի լուծուի որպէս ջոկ խնդիր, միւս ամենայն կապակցութիւններից դատուած: Լուծումն անշուշտ չի կենդրոնացած միայն փոան մէջ, այլ աւելի բարդ հանգամանքներում պիտի փնտռուի: Եժան, շատ էժան հաց պիտի մատակարարուի բայց սյոգլիսի հացը պէտք է առողջարար լինի, որ կարողանայ մարդկային մարմինը կատարելագոյն անդել: Սակայն այդ հացը չպէտք է առաջ բերէ վարձի ծնում: ապա ուրեմն նախ հարկատր է, որ անգործների բանակը լուծուի և ջնջուի: այսինքն որ աշխատող ձեռքերի չափազանց և պարագ առաջարկը վերջանայ: Այս էլ կ'իրականանայ, եթէ կաշառածատիրութեան խնդիրը կանոնաորուի, գիւղատնտեսութիւնը շարունակ կատարելագործուի, գաղթականութիւնը դադարի և ձեռագործութիւնը նորից ծաղկի: Սրանց համար հարկատր են հողարածնի իրաւանց վերանորոգութիւն, աշխատութեան խելացի կազմակերպութիւն, արմտիքների գնի աճեցում, տնտեսականութեան բոլոր ճիւղերի ազգային կազմակերպութիւն, այս ամէնը սերտ կապ ունի այն իրողութեան հետ, որ ազգային տնտեսութիւնը ըստ չափու հնարաւորութեան անկախ դրուի համաշխարհական առևտրից, ընդ նմին արդիւնագործութեան արտադրութիւնների համար՝ բախտի շնորհն ու բախտախնդրութիւնը վերանայ, իսկ ամէնից առաջ պէտք է, որ ամբողջ գիւղական տնտեսութեան ղեկավարութիւնը հանուի արդի մեծագոյն ընկերական և տնտեսական իշխանութիւնից—այն համաշխարհային մեծ գրամագլխի ձեռքից, որի վիժխալի աշխատութիւնը հասարակօգուտ տնտեսական բարգաւաճութիւն նպատակ ունենալ չի կարող և նոյն ղեկավարութիւնը այսուհետեւ գրուի աւելի ձեռնհաս՝ այն է հասարակաց ինքնավարութեան մարմինների ձեռքի մէջ:

Արդ այս ուղղութեամբ ընթացող, օրհնաբեր, ազգեցիկ և աւելի իրագործելի քայլերից մէկն է—ազգին հաց մատակարարելը հասարակութեան ձեռքով՝ ստովեալներին կերակրելու պարտականութիւնը համապատասխանում է ամենայն մարդու սպրելու բնական իրաւունքին:

(«Das Leben» եռամսեայ հանդիսից):

Ս. Մ.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բնակարանի հետաւորութիւն և երկանիս. Գաղտնի հետու աների մէջ բնակելու վարձողներ գրաւելու համար՝ այժմ՝ Եւրոպայում հետեւեալ հնարն են գործ դնում: Ցանտէրը այդպիսիններին տալիս է մի մի էժանագին (155 մարկ արժողութեամբ), բայց հաստատուն երկանիս: Այս արժէքը վճարվում է շարաթական 1 մարկ շնչին հատուցումներով:

\*\*\*

Աղի հարկը Գերմանիայում. Յայանի է, որ աղի հարկը մեծ ծանրութիւն է ժողովրդեան համար, ուստի և շատ երկիրներում, զոր օր. Ռուսաստանում, ժողովուրդը ազատուած է այդ հարկից, Գերմանիայում, ուր որ աղի արտադրութիւնը շատ էժան է նստում՝ անհամեմատ մեծագումար աղահարկ է հաւաքվում — մօտ 46 միլիոն մարկ (Գրանտիայում՝ 6 միլիոն, Աւստրիայում՝ 35 միլիոն): Բայց զարմանալին այն է, որ այդ տեղ մարդ աւելի աղահարկ պիտի վճարէ, որքան աւելի աղքատ լինի: Այս բանը բացատրվում է այն հանգամանքով, որ աղքատ գասակարգի կերած ուտելիքը ամէնից աւելի աղ է պահանջում: Գերմանացին առաւելագոյն գեանախնձոր է ուտում և իհարկ է հետն էլ շատ աղ: Ընդեղէններ, հաց, բրինձ մարսելու համար աւելի քիչ աղ է հարկատր, քան գեանախնձոր մարսելու: իսկ հարուստների համար կերակուրների մէջ ամէն տեսակ համեմներ և անուշեղէններ կան, բայց ամէնից պակաս — աղ: Հարուստը տարեկան հազիւ 8 գրուանքայ աղ է գործածում, իսկ աղքատը աւելի քան 32 գրուանքայ: նա վճարում է 48 պֆենիգ աղահարկ, իսկ սա 180 պֆենիգ:

\*\*\*

Անտառ և կլիմայ: Վաղուց տարածուած է այն միտքը, թէ անտառները բարեբար ազդեցութիւն են գործում կլիմայի վերայ, սնուցանում են գետեր, թուլացնում են երաշտութիւնը և այլն: Այժմ էնգէլհարդը վարդապետում է, թէ այդ գաղափարը ոչինչ հիմք չունի և սխալ է: Նորահայեցմամբ այդ գաղափարը կազմուել է սխալ գատողութիւններից, Ասում են, թէ անտառները միտոլոգիք հոյակնելով՝ ջրի գոլորշիքը քարշում են դէպի մերձաւոր վայրերը և այդ տեղ աճեցնում են անձրևների քանակութիւնը: Բայց ճիշդ գիտողութիւններով արդէն ապացուցուել է, թէ անտառները անձրևի քանակի վերայ լին ազդում և թէ անտառի մէջ և անտառից դուրս նստող ջրի քանակը հաւասար է:

«Անտառները պահպանում են օդի ջերմութեան և խոնաւութեան բարեխառնութիւնը: Բայց դարձեալ ապացուցուել է, թէ օդի ջերմութեան և խոնաւութեան փոփոխութիւնները զգալի գանազանութիւն չեն երեւցնում անտառի մէջ և անտառից դուրս: